

ԱՍՏՂԱՅԻՆ ԵԹԵՐ

Մոգական լապտեր... լուսինն այս գիշեր
Խաղաղ կը ցաթէ արցունքի բիւրեղ.
Ինծի կը թուայ կարծես երէկ էր
Եկայ այս աշխարհ արցունքի մը տեղ...:

Լուսնի աչքերէն շիթերը անմեղ
Մանանայի պէս կը հոսին վարար...
Ձիւնի պէս ճերմակ լուսամուտէս նեղ՝
Կամուրջ կապեցին երկինք ու աշխարհ...:

Կամուրջ կապեցին հոգիս ու եթեր
Բիւլ արցունքներու լոյսերով վարար,
Հոգիիս տունին լուսինն է լապտեր,
Իսկ աստղերը լոյծ՝ արցունքի կայծեր...:

Հարուստ է հոգիս, հարուստ այս գիշեր.
Աշխարհիկ գանձեր այնտեղ չեն շողար...
Ո՞վ է ունեցած աստղային եթեր
Իր հոգիին մէջ, զոր չի տար աշխարհ...:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ